



**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿԱՆԴԱԿՎ ՎԱԿԵՐԻ ՄԵԶԼՈՒՄՅԱՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ՄԻՐԵՅԵԱՆ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՎԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՈՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՇՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՎԱԿԵՐԻ ՄԵԶԼՈՒՄԵԱՆ**

Գոհութիւն եւ Փառք ենք մաքուցում Երկնատրին ի սփիւռս աշխարհի բնակուող հայրենասէր ու եկեղեցանուէր հայրողիների համար, ովքեր, հաւատարիմ մեր նախնեաց սուրբ ասանդներին, իրենց հոգեւոր, մտաւոր ու նիւթական կարողութիւնները անսակարկ սիրով ու պատրաստակամութեամբ ի սպաս են դնում յանուն ազաւոր ու անկախ հայրենի մեր երկրի զօրացման, ազգային հասարակական կեանքի շինութեան եւ Առաքելական մեր Մայր Եկեղեցու պայծառութեան:

Մեծարգոյ պըր Մեջլումեան, մեր ժողովուրդը փարիներ շարունակ ականաւորես է հայրենական կեանքում բերած Ձեր արդիւնաշար մասնակցութեանը: Ձեր ներդրումների շնորհիւ վերագործարկուեց տեւական ժամանակով իր աշխատանքը ընդհատած Ալավերդու պղնձամուրիբղենային գործարանը, որը այսօր կարեւոր ասանդ է բերում Հայաստանի հիւսիսային շրջանների տնտեսութեան աշխուժացմանը եւ երկրի արդիւնաբերութեան զարգացմանը՝ հնարատրութիւն ընձեռնելով մեր ժողովրդի շար գաւակների ներկայ կեանքի դժուարին այս պայմաններում կայուն աշխատաւորեղեր ունենալ:

Աստիճանաբար Ձեր ձեռնարկումների պսակն է Գուգարաց Տիրախնամ թեմում հիմնուած շքեղակառոյց Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցին, որ Հայոց Մեծ Դարձի յոթելանական այս րարում իր շնորհաբաշի դռներն է բացում հաաւրացեալների առջեւ: Այսուհետ բազում հաաւրատոր հայորդիներ իրենց աղօթքը պիտի բարձրացնեն առ Աստուած՝ Սուրբ Գրիգոր Նարեկացու բարեխօսութեամբ Ամենախնամ Տիրոջ երկնառաք օրհնութիւնը հայցելով մեր երկրին ու ժողովրդին եւ Իր առաւր շնորհները՝ նուիրեալ հայորդոյն եւ Մեջլումեան ընրանիքին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու խորին գնահատանքն ենք յղում Ձեզ եւ առ ի գնահատութիւն ազգային մեր կեանքում բերած վաստակի, սիրով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պարտոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով հայցում ենք Ամենակալ Աստծոց, որ Իր հանապազ օրհնութեան ներքոյ միշտ բաջառողջ ու երջանիկ պահի եւ պահպանի Ձեզ ու Ձեր ընրանեաց անդամներին՝ առաջնորդելով բարի ու հայրենանուէր նորանոր իրագործումների:

Թող Ձեր յարկը շնորհընկալը լինի երկնապարգեւ բիր բարիքների եւ առաւր ողորմութեան:

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ամենեւեւեւն ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տուաւ Կոնդակս ի 5-ն Նոյեմբերի

յամի Տեառն 2001 եւ ի թուին հայոց ՌՆԾ

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

ընդ համարաւ 67